Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-232[77]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հայցվորները՝ քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.».

2) 1-ին մասի 7-րդ կետում «արդարացվածները» բառը փոխարինել «արդարացված մեղադրյալները» բառերով.

3) 1-ին մասի 7-րդ կետի «ա.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով,».

4) 1-ին մասի 7-րդ կետի «գ.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. անազատության մեջ պահելու ձևով պատիժը կրելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով,».

5) 1-ին մասի 7-րդ կետում լրացնել նոր՝ «ե.» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. գույքն առգրավելու, արգելադրելու, բռնագրավելու կամ այլ կերպ տնօրինելու հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով.».

6) 5-րդ մասում «քաղաքացիական հայցի» բառերը փոխարինել «գույքային հայցի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի «դ)» կետում՝ «ընտանեկան» բառից հետո լրացնել «գործերով» բառը, «քրեական գործերով» բառերը փոխարինել «քրեական վարույթներով» բառերով, իսկ «նախաքննական մարմիններ» բառերը փոխարինել «նախաքննության մարմիններ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական իրավասու մարմինները կալանք և (կամ) արգելանք դնելու, ինչպես նաև արգելադրման միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար ազատվում են պետական տուրքի վճարումից:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը: